

կած հրամանատարները իրենց հետ ունեին զինուորներ, որոնք եթէ իրապէս՝ Մասնակի ըսածին պէս՝ 4.000-ի չափ էին, այն ատեն աւելի կը հաստատուէր մեր կասկածը՝ թէ Մասնակի առանձին եւ անոյժ չէր գտած Բաբակը, եւ վերջինս ղեկ ոյժ ունէր։ Մասնակի եւ արար հրամանատարներուն ձեռք առած միջոցները՝ Բաբակը բերդէն դուրս, յանկարծակի, որսի միջոցին ձերբակալելու, որեւէ տարակոյս չեն թողուր որ վտանգաւոր էր Բաբակ, որ եթէ յանկարծակի եւ ապահովաբար չձերբակալուէր, կրնար ղեկ փորձանք ըլլալ Մասնակի եւ ալ-Աֆշինի ալ։

Բաբակ այսպէս որսի ատեն յանկարծակի ձերբակալուեցաւ ալ-Աֆշինի հրամանատարներէն։ Բար Հերբայուն տարբեր կը պատմէ դէպքը՝ ըսելով. «Երբ Բաբակ, իսլամադինի ապստամբը, տեսաւ որ իր կուսակիցները անզոր են, իր դրամները բռնուց (գրաստներու) եւ իր մարդոցմէն չորս հարիւրին հետ փախաւ դէպի Հոռոմոց Երկիրը։ Եւ երբ Հայաստան հասաւ՝ որոշ աղնուական մը, որուն անունը Իսթաֆանուս էր, զինքը շողմեց եւ զինքը իր տունը տարաւ՝ իբր թէ անոր պատիւ ընելու, սակայն անոր երկաթ կապանքներ զարկաւ։ Եւ երբ Մուտաղիմ իմացաւ (ասիկա), Աֆշինը՝ իր բանակին հրամանատարը զրկեց Իսթաֆանային նուէրներով, եւ անոնք առին Բաբակը եւ սպաննեցին։ Որովհետեւ այս մարդը բնաջնջած էր աւելի քան հարիւր հազար արաբական զօրքեր»։

Բար Հերբայուն նախ չի յիշեր Մասնակի Մնրատը՝ իբր գլխաւոր ղեկավար Բաբակը ձերբակալողներուն դորձակից. այլեւ Իսթաֆանուս հայ իշխանը ցոյց կու տայ բուն ձերբակալող։ Բար Հերբայուն ալ վերոյիշեալ անանուն արար պատմիչի հատուածին համաձայն՝ Բաբակի ընկերացող հետեւորդներու գոյութիւնը կը հաստատէ եւ զանոնք մինչեւ 400 հոգինոց պատկանելի ոյժի մը կը հասցնէ։

Մասնակի վարձատրուեցաւ նիւթապէս ալ։ Բաբակ, ըստ Տարբարիի, կ'այլանէր Մասնակի իր ձերբակալուելու պահուն, եւ ինք պատրաստ էր արաբացւոց տուածէն աւելիովն իսկ զինքը վարձատրելու՝ եթէ դրամ էր Մասնակի ուղածը։ Տարբարիի, այս վկայութիւնը, իր ձեռով մեղի խորհիլ կու տայ որ Մասնակի դրամի համար չէր որ Բաբակը արաբացւոց կը յանձնէր։ Մասնակի հայրենիքը աւերողէն վրէժ կ'առնէր։ Տեսնաւ որ Մակդիսի կը վկայէ Մասնակի Բաբակէն կախանաբորուիլը, իր մօր, քրոջ եւ կնոջ անկէ պղծուիլը։

Ետեւորդիի համաձայն՝ ալ-Աֆշին խոստացած էր Բաբակ իրեն յանձնողին մէկ միլիոն դրամ, այսինքն 40-50.000 ոսկի զինար։ Հաւանաբար այս եղաւ Մասնակի վարձքը։

Բաբակ զրկուեցաւ իսլամադինի, եւ ինչպէս ըսինք՝ սպաննուեցաւ⁽⁹⁾։

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

(Շարունակելի)

ցան 7.600 կիներ եւ մանկահասակներ, զարձեալ ըստ Տարբարիի, թէեւ Իսկ իսլամուն միայն կիներ կը նշանակէ։

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

«ԳԻՐՔ ԶԵՆԱԴՐՈՒԹԵԱՆՑ» ՄԱՍԻՆ

Ա. - ԽՈՐԱԳԻՐՆԵՐ

Յօդուածիս նպատակն է ուսումնասիրել «Գիրք Զեռնադրութեան» մատենին խորագիրները՝ «Պուղումն Հերաց»էն մինչեւ Կիսասարկաւադութիւն։ Այս խորագիրներուն վրայ, շատ մը զիտողութիւններ եղած են, դրաւոր կամ բերանացի, զոր հետեւեալ բառերով ամփոփած է Գերպո. Յարութիւն Ռուպեան, անտիպ մնացած ձեռագրի մը մէջ « Osservazioni sul Pontificale Armeno» վերնագրով. «Osservo anzitutto che mancano delle rubriche, ovvero non sono esse ben precisate, onde avere l'uniformità delle sacre funzioni» (manoscritto, pg. 7):

Նոյնպէս վարդապետուի Սերովբէ Վ. Դաւթեան, եպիսկոպոս Անույ, ձեռագիր աշխատասիրութեան մը մէջ, Ս. Կարգերու մասին՝ ըսելով. «Այս կարգ Զեռնադրութեան չեն դերձ ի վրիպից, մանաւանդ ի բանս եւ ի բացատրութիւնս խորագրաց» (կանխարան)։

Արդ, մենք կը կարծենք որ խրատներու այս անճշտութիւնը կամ պակասը կարելի է դարձանել հայ եկեղեցւոյ աւանդութեամբ եւ զանազան բնագիրներու բաղդատութեամբ, ինչ որ ստորեւ պիտի ջանանք ճշդել, փարատելով անոնց մասին եղած կարգ մը քննադատութիւնները։

1. — Խնկարկուիւն։ Վաղարշապատու «Մաշտոց Զեռնադրութեան» եւ Պոլսոյ «Մաշտոց քահանայապետական» ձեռեւեալ խորագիրը վը կրեն ի կարգ Մաղմուսերդաց եւ Աւելածուաց. «Եպիսկոպոսն նախ խնկէ սուրբ սեղանոյն...»։ Այս խորագիրը չեն յիշեր ո'չ Վենետիկոյ Միթրարեան Հայրերու «Գիրք Կարգաց եւ Զեռնադրութեան»-ը, եւ ո'չ ալ Հոռոմի Լե-

ւոնեան վարժարանի խմբատիպ «Կանոնք Կարգաց եւ Զեռնադրութեան»-ը։ Մասկայն, թէ՛ Լեւոնեան վարժարանի եւ թէ՛ Սերովբէ Դաւթեանի «Կարգ Զեռնադրութեան»-ը Կոչումէն առաջ խնկարկութիւն մը կը յիշեն, բայց չեն կրկնէր զայն «Պուղումն Հերաց»-ի արարողութեանէն առաջ, թէեւ կոչումը անջատ կ'ընեն։ Արդ՝ աւանդութեան զիտենք որ խնկարկութիւնը տեղի կ'ունենար ամէն արարողութեան սկիզբը։ Այսպէս. «Une fois le clergé entré dans le sanctuaire, on procède, comme au début de toute fonction solennelle, à l'encensement du temple et de la communauté» (Proche-Orient chrétien, VII. Juil.-Sept. 1957, pg. 251).

Նոյնը կը հաստատէ Մեծարդոյ հայր Al. Raes, S. I. աւելցնելով որ թէ՛ առաւօտը եւ թէ՛ իրիկունը կը կատարուէր խնկարկութիւնը։ Նոյնիմաստ խօսքեր ունի նաեւ «Գիրք Ժամակարգութեան որ կոչի Աստենի», տպուած Մարտիրոսի մէջ 1673ին. «Յառաջ քան դամեանայն (Գիրքային Ժամեղութեան մասին է խօսքը) պարտ է փակակալին... խունկ արկանել եւ հնչեցուցանել զղանկակ» (էջ 4)։ Նմանապէս Երեկոյեան Ժամեղութեան համար կ'ըսէ. «Յառաջ լուցանէ փակակալն զկանթեղան եւ խնկարկէ եւ ապա հարկանէ զղանկակս» (էջ 9)։ Հետեւաբար խնկարկութիւնը Կուրակի եւ Չորս Աստիճաններու արարողութեան սկիզբը կատարելու է, ըստ մեզի, նկատի ունենալով նաեւ որ սոյն արարողութիւնը Ժամեղութեանէն եւ պատարագէն բոլորովին անկախ տեղի կ'ունենայ։

2. — Ազօրքը կանգուն։ Եպիսկոպոսը

(9) Տարբարիի հետ գերի բռնուեցան, ըստ Տարբարիի, 3.300 հոգի. իսկ ըստ Իսկ իսլամունի՝ 3.300 հոգի։ Իսկ Բաբակի ղեկութեան փրկուե-

նստած՝ թէ կանգուն ըսելու է աղօթքները: Առհասարակ խորագիրը կը պակսի այդ մասին: Քանի մը զիրքերու մէջ մատիտով աւելցուած է «յոտին» կամ «կանգուն» բառերը:

Ըստ հայ Եկեղեցւոյ աւանդութեան՝ բոլոր աղօթքները, ժամերգութեան ատեն, կը վատարունին ոտքի վրայ: Ուստի կը կարծենք որ առանց տատամսելու՝ կրնանք «կանգուն» խորագիրը աւելցնել, ինչպէս արդէն կը գրէ Վենետիկի «Գիրք Կարգաց եւ Զեռնադրութեանց»ը (էջ 4):

3. — Աթոռ եպիսկոպոսին: Խօսքը ոչ թէ եպիսկոպոսին սովորական գահին վրայ է, այլ շարժական աթոռի վրայ: Բընադիրները զանազան տեղեր կ'որոշեն անոր: Լեւոնեան զարգացի «Կանոնք Կարգաց»ը կ'ըսէ. «Եւ զայ (եպիսկոպոսն) բազմի ի գահն (աթոռ) արտաքոյ դասուն» (էջ 3): Մինչդեռ Պոլսոյ «Մաշտոց քահանայապետական»ը կ'ըսէ. «Եւ եպիսկոպոսն նստի յաթոռ՝ մերձ ի դուռն եկեղեցւոյն» (էջ 3): Իսկ Վաղարշապատու Մաշտոցը կը գրէ. «Եւ երանեն արտաքս ի դուռն եկեղեցւոյն՝ ուր նստի եպիսկոպոսն յաթոռ (էջ 5): Այս տարբերակներու պատճառ կրնանք համարել տեղւոյ անձկութիւնը կամ անյարմարութիւնը: Էականը՝ որ աթոռը դուռի արտաքոյ բեմին, կամ դասին՝ եթէ սովորական գահը դասին մէջ կը պահուի:

4. — Եւ ասէ: Երբ Աստիճանի մը արարողութեան մէջ, սպասուց տուչութիւն կայ, խորագիրը սովորաբար հետեւեալ կերպով կը ներկայանայ. «Դնէ զբանալին ի ձեռս նոցա եւ ասէ»: Բուպեան Գերապայծառը կը նախընտրէ «ասելով» խորատը գնել, «եւ ասէ»ին տեղ: Ինչպէս ըսինք «ասելով» հաղորդակցու է: Սերովբէ վ. Դաւթեան ինքնաշատու զարձուածք մը կը գործածէ. («Եւ բանալին» աւանդելով ասացէ): Մենք կը նախընտրենք

պահել «Եւ ասէ», որ աւելի վայելուէ է եւ ոսկեդարեան լեզուին մէջ կը նշանակէ՝ միաժամանակ ասել:

5. — Աշտանակ վառեալ լապտերօք: Զահնկալութեան կարգին մէջ կը կարգանք հետեւեալ խրատը. «Առնու եպիսկոպոսն զաշտանակն անվառ մոմով եւ տայ ի ձեռս նուիրելոցն» (Լեւոնեան զարգացի «Կանոնք Կարգաց», էջ 23): Վաղարշապատու Մաշտոցը «Վառեալ լապտերօք» կ'ըսէ: Մինչ «Մաշտոց քահանայապետական»ը Պոլսոյ, պարզապէս «աշտանակն լապտերօք» ունի: Բուպեան Գերապ. ը կը շեշտէ որ շիջեալ մոմով ըսուի: Համամիտ չենք անոր: Նախ՝ որովհետեւ ձեռնադրեալը իշխանութիւն կը ստանայ «լուցանելու զլապտերս եւ զկանթեղս ի սուրբ եկեղեցւոյ»: Այդ՝ քնակահարար կ'ենթադրէ որ իրեն լուսաւոր մոմ մը տրուի, որ պէսպիսի ընդունած պաշտօնը կատարէ: Երկրորդ՝ Զահնկալ բառին իմաստը կը պահանջէ որ Զահ, զոր ձեռնադրեալը իշխանութիւն կը ստանայ տանելու արարողութեանց ընթացքին՝ վառած ըլլայ: Նոյնպէս, վառեալ լապտերօք աշտանակ, կը յանձնուի կուլակաւորին ձեռքը բիւզանդական ծէսին մէջ⁽¹⁾:

6. — «Խուզումն հերաց»ի եւ չորս Աստիճաններու արարողութեանց ժամանակը: Բոլոր ձեռագիրները եւ մաշտոցները լուռ կը կենան այս մասին: Ուստի կը հետեւի թէ այդ արարողութիւնները անկախ կը կատարուէին ժամերգութեանէն եւ պատարագէն, ինչպէս որ է արդէն լատիններուն եւ յոյներուն քով:

«Les ordres de lecteur ou de chantre se confèrent en dehors de la liturgie... Habituellement toutefois cette fonction est accomplie par l'évêque lui-même lorsqu'il a revêtu les ornements sacrés pour la liturgie, mais avant la récitation des heures qui précèdent celle-ci» (2).

Սերովբէ վ. Դաւթեան հակառակ ծա-

նօթութիւն մը կը գնէ. «Յերկրորդում աւուր զկնի կոչման (արարողութիւն) «խուզումն հերաց»էն առաջ) ձեռնադրողն պատարագացէ: Ամենայն ինչ ըստ կարգի արարողութեան (պատարագի) եղիցի. եւ մինչ հասանեն յաղօթան որ զկնի Երեքսրբենին «2ի ողորմած եւ մարգասէր ես Աստուած զոլով...», զայս ասացեալ եպիսկոպոսն յաւարտն՝ զայ եւ նստի յաթոռ որ պատրաստեալ կայցէ... սարկաւազն քարոզեսցէ «Եւ եւս խաղաղութեան...»⁽³⁾: Եւ կը սկսի «Խուզումն հերաց»ի արարողութիւնը:

Իսկ Giovanni De Serpos⁽⁴⁾ խօսելէ վերջ կոչման մասին՝ կ'աւելցնէ. «La sacra ordinazione... si fa il dì susseguente, che d'ordinario suole essere quello di domenica... Il vescovo dà principio alla solenne Liturgia. Incensato che abbia l'altare, e detto l'introito, scende dall'altare, si mette a sedere sulla sedia episcopale e conferisce la prima tonsura».

Կը կարծենք որ այս վերջին երկու գիտողութիւնները որ «խուզումն հերաց»ը եւ փոքր աստիճաններու արարողութիւնը կը գետեղեն պատարագի մէջ, եկամուտ ըլլան, եւ պիտի նախընտրենք որ պատարագէն անկախ տեղի ունենան:

7. — Կոչումն: Սերովբէ Դաւթեանի իշխալ ձեռագիրը աշխատութեան մէջ (էջ

1) «Խուզումն հերաց»ի արարողութեանէն առաջ կայ կոչումն ըսուած արարողութիւն մը: Լեւոնեան վարժարանի «Կանոնք Կարգաց եւ Զեռնադրութեանց» գիրքը (էջ 3), նոյն արարողութիւնը կը գնէ առանց կոչումն վերնագրին, «Սկիզբն աստիճանաց» խորագրին տակ, որուն կը յաջորդէ նոր խորագրով «Խուզումն հերաց»ի արարողութիւնը (էջ 6): Գերապ. Թերզեանի տպագրութեան մէջ (էջ 3) նմանապէս նոյն արարողութիւնը կայ առանց կոչումն վերնագրին, բայց միացած է Սաղմոսերգուի եւ Աւելածուի արարողութեան, «Սկիզբն աստիճանաց կղերիկոսաց» խորագրով:

Մինչ Վենետիկոյ Միթիթարեանց եւ Վաղարշապատի (էջ 5) տպագրութեանց մէջ բոլորովին զանց առնուած է կոչման արարողութիւնը, եւ կը սկսին Սաղմոսերգուի եւ Աւելածուի արարողութեամբ՝ «Սկիզբն աստիճանաց կղերիկոսաց» խորագրով:

Իմ կարծիքովս կոչումն ըսուած արարողութիւնը բոլորովին ջնջելու է Կարգ ձեռնադրութեանց գրքերէն, պահելով Վենետիկոյ եւ Վաղարշապատի տպագրութեանց մէջ գրուածը: Եւ միայն նախաբանին մէջ՝ իբր խրատ գնել զայն, որ պէսպիսի ծառայէ ան եպիսկոպոսին:

(Շարունակելի)

† ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊՍԿ. ՀԻՆՏԻԷ

(1) — cf. F. Mercenier. La prière des Eglises de rite byzantin, t. I, pg. 363. Amay.

(2) — Ibid., pgg. 359-360.

(3) Սերովբէ վ. Դաւթեան, ձեռագիր, էջ 14:

(4) — Compendio storico, tomo terzio, Venezia 1786, pg. 373.